

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
 սարեկակ 12 ֆր.
 վեցամսայ 7
 Արսասահմանի
 համար սարեկակ 15 ֆր.
 վեցամսայ 8
 Անկերիկայի համար
 սարեկակ 3 ռ.
 վեցամսայ 1.50

Ծանուցման տողը սուրբին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղջ կրնայ:

Վառակայի համար ձեռք 10 սանթիմ է

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ԲԱՂՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՎՇԱՐԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

Նախակ եւ զբաղ զրկել խմբագրութեանս նապակին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեն տրուիր

ՇՆՈՐԾՈՒՄԻ ԲԱՃԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃԱՆԿԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԵ

ԱՆԳԼԻԱՆ ԻՐ ԻՍ— ԿՈՒԹԵԱՆ ՍԷՋ

Բ. Հ. Գործակալութեան Պարիզից հաղորդում են. — Պոլսոյ Բերա քաղաքամասի փողոցներում պատերին փակցված են նշանակալի ստորականներին կոտորելու թուրքերէն կոչեր, ու անգլիական դեսպանը այդ առթիւ Բ. Գործակալութեան ազգու և կրտսերու կայտարարութիւն է արել. — «Եթէ մի անգլիական հպատակ իսկ զնապի, անգլիական նաւատորմիցը պէտք է Գործակալութեանը անցնի»:

Այս լուրը գեռ հաստատված չէ, սակայն ճիշտ լինելու մեծ հաւանականութիւն կայ:

Այս փաստից որոշ և պարզ եզրակացութեան կարելի է յանգիլ, այսինքն անգլիական կառավարութեան համար մի անգլիացին աւելի պերագասելի է քան թէ տասնեակ հազարներով կոտորվող հայերը, ինչպէս կոտորվող հայերի համար անգլիական զրահաւորները չէին կարող Արարատը բարձրանալ, բայց մի անգլիացու համար նրանք կարող են Գործակալութեանը ճեղքել, անցնել և կարմիր Սուլթանի մայրաքաղաքը գլխին քարուքանդ անել:

Մենք լսել ենք որ Բիսմարկը ասել է թէ Գերմանիան ամբողջ հայերի համար մի պոմբրանցի զինուոր չի զոհի, անգլիացին երբէք այդպիսի խօսք չէ ասել. բայց նա միշտ ասել և կատարել է. թէ մի անգլիացու համար կարող է առանց երոպական պետութիւնների համաձայնութեան Խուրքիոյ ու է մասը ուժակով ձեռնարկել մեծ պետութեանց գէպի հայերս բռնած զիրքի միջև իրականութեան մէջ գրեթէ ոչ մէկ տարբերութիւն կայ. և Երեւոյթների տարբերութիւն կայ միայն. Գերմանիան յայտարարել է որ մի զինուոր չի զոհի հայերի համար, իսկ Անգլիան տասնեակ հազարներով հայերի համար ոչ մի զինուոր չէ զոհել:

Իսկ մի անգլիացու համար պատերազմի բռնկվելէ Խուրքիոյ հետ: Երբ հայերն են կոտորվում Անգլիան ուզում է ցոյց տալ որ Սուլթանին պատժելու համար իր զրահաւորները Արարատ լեռը չեն կարող բարձրանալ. իսկ երբ Իրեն մէկ հատիկ անգլիացուն — վտանգ կարող է սպառնալ. նա գիտէ թէ իր նաւերը զէպի մայրաքաղաքը պէտք է ուղղել. ուր հայերի զահճապետն է տեղաւորված:

Իհարկէ մենք երբ լրջօրէն դատենք, իրաւունք չունենք Անգլիայից պահանջել որ բոլոր հայերիս զոհն մէկ անգլիացու չտփսիրէր. բայց միշտ մենք սխալ ենք դատել. կարծել ենք որ մարգասիրական գաղափարը աչգի, ցեղի, դաւանանքի խտրութիւն չէ ճանաչում. Գերմանիան սինիքաբար և անգլիան կեղծաւորաբար մեզ յայտարարում են որ եւրոպական պետութեանց բարոյական տնտրակում մարգասիրական պաղափարը գոյութիւն չունի, առաջին գերը կատարողը նիւթակտնն է. Այդ, մանաւանդ այսօր, չտեսնելու համար բոլորովին ապուշ պէտք է լինել. Մենք առաջ միամիտ, լաւատես, եւրոպացիներին հաւատացողներ էինք, այսօր շարունակել նոյն հաւատը ունենալ զէպի եւրոպական պետութիւնները կատարեալ անմտութիւն պէտք է լինէր մեր կողմից: Միանգամ ընդմիշտ ընդունելու է որ Եւրոպան մեզ օգնութեան կը հասնի միայն իր շահերը փրկելու համար. և պէտք է ջանալ գրական փաստերով ցոյց տալ որ մեր ներկայ գրական շահերին զնապի: Մենք հայերս պէտք է ընդունենք որ մեր թշնամին Սուլթանն է, բայց նրա անուղղակի պաշտպանը Եւրոպան է. Ուրեմն Եւրոպայի պաշտպանեալին այն պիտի զնապենք պէտք է տալ, որի ուղղակի հետեւանք լինի հէնց իրեն Եւրոպայի մեծ շատ մեծ զնապի: Ունենք մենք

ուժը, կարող ենք ստեղծել եւրոպայի շահերին մեծ վնաս հասցնելու ուժը, ահա ինչ պէտք է լինել մեր մտածութեան, ուժերի և ճիգերի նիւթը:

ՎԱՐՊՈ

ՇԼԻՍԵԼԲՈՒՐԳԻ ԲԱՆՏԸ

Ընկան ՚ին կարգերը. այն բոլորը, որի համար գեռ երէկ մի քանի տարուայ բանտարկութիւն էր սպառնում, այսօր կարելի է աներկիւղ անել Արեան հեղեղները, տասնեակ հազարներ բանտարկում ու քարտէսներում փտել, այդ բոլորը գրաւական էին լաւագոյն ապագայի, այդ բոլորը մտքերը ազգաբնակչութեան լաւագոյն մասի իտիներն ու տենչաքննիչ էին. Պատմութիւնը արդէն գատապարտել է անցեալը, անցել են այն ժամանակները երբ բոլորը կարող է կրկնուել:

Հին կարգերի վիաներից ու յենարաներից մէկն էլ հաշակաւոր Շլիսելբուրգի մասը բանտ է, հիմնուած 16 դարում Պետերբուրգից ոչ հեռու, աճայի կղզու վրայ. նա իր պատերում տեսել է թէ թագադիր բանտարկեալները (թշուառ ի վան Անտոնովը) և թէ ինքնակալութեան թշնամիներին, նոյն իսկ այսօր, երբ վերածնուած Ռուսաստանը հանդիպում է բանտերից թողած իր զաւակներին՝ Շլիսելբուրգի մասը բանտը լուռ կանգնած է կարծես թէ ոչինչ տեղի չէ ունեցել և ինչ էլ որ տեղի է ունեցել, չէ վերաբերուել նրա բնակիչներին, Բայց ո՞վ են նրա բնակիչները, այդ կատաղի արիւնթարուները, որոնց կատավարութիւնը վախենում է լոյս աշխարհի թողնել: Ո՞վքեր են այդ տիտանները, որոնց լոյս աշխարհ գալը գեռ ևս երկիւղ է ազդում հաւերին ու չղջիկներին: Վերջին 35 տարուայ ընթացքում Շլիսելբուրգի ամբողջում բանտարկուած են եղել մոտ 65 հոգի, որոնցից ներկայումս այնտեղ են 12 հոգի. — Պօպով, Ֆրոյնկո, Մորոզով, Լօպատին, Անտոնով, Իվանով, Նօփօրուկի, Լուկաչևիչ, Կարպովիչ, Գերշուկի, Սաղօնով և Սիկօսկի:

Սոցանից առաջին երեքը բանտարկութեան մէջ են արգէն 26 տարի, Գերման Լօպատինը նստած է 1884 թ. հոկտ. 4-ից, Սա Կարլ Մարքսի և Լաւրովի մօտիկ բարեկամներից մէկը, իր ամբողջ կեանքը նուիրել է ժողո-

վրդի ազատութեան սուրբ գործին և մինչև Շլիսելբուրգ էլ արգէն մի քանի անգամ բանտ էր տեսել. ներկայումս նա հիւանդ մի ծերունի է (60 տ.), Առողջ չեն եւ մնալանները. Մորոզովը («Նարոզի Վօլի» պօլարը) ըստ անցեալ տարի ազատուած վերաֆիզիկի, այնքան նիհար է, որ յիշեցնում է թերթերում տպուած Հնդկաստանի սովի ժամանակ սոված հնդկներին Ս. Իվանովը տանջուած է էպիլէպսիայով, Պետր Անտոնովը (բանուոր) նեվրոստիկայով:

Շլիսելբուրգի բանտը գերեզման է շատ նահատակների, ժողովրդի ազատութեան անվերջ մտքիներին — Ալէքսանդր Միխայլով, Բարանսկով, Մրեչկին, Կլայօնակով, Կօլտակեւիչ, Զլատուպօսկի, Բողանովիչ, Գրաչեւսկի Սօֆիա Գինցբուրգ, Բալաչեւ և շատ ուրիշները:

Հովտեմբերի 17-ի ամիստիան Շլիսելբուրգի գերիներին չվերաբերուեց: Գաղաքացիական ազատութիւնը յայտարարուած է. Ազատութիւնը, թէև պատ, ձեռք է բերուած, բայց ազատութեան համար մարտնչողները, մարտիրոսները, հերոսները, որոնք ամեն բան զոհել են ժողովրդի լաւագոյն օրուայ համար՝ զեռ եւս մնալ կղզու բանտում են: Իրանք կուում էին արդարացի գործի համար, այդ արդարութիւնը այժմ ստիպուած են ընդունել նոյն իսկ նրանք՝ որոնք մինչ այժմ այդ «յանցանք» էին համարում:

Նորոգուած Ռուսաստանը կարող է ծաղկել միմիայն իր զաւակների հետ միասին. ընդհանուր ամիստիան է միայն, որ կարող է տալ մեզ այն ոյժերը, որոնք ընդունակ կը լինեն վաղուան օրը աւելի պայծառ դարձնել Ընկան հին կարգերը, նրանց հետ պէտք է ընկնեն եւ բանտերի նեղ պատերը ազատութիւն մարտիրոսներին, ազատութիւն Շլիսելբուրգում կենդանի թաղուածներին, ընդհանուր ազատութիւն բոլոր մարտիկներին...

Լիակատար ամիստիա է անհրաժեշտ:

Բազուի զէպերի մա. ՌՈՒՍ ՔԱՀԱՍԻՆ ուսու քահանայ ՆԱՆ ԲԱՊՈՒԹԻ Ալէքսանդր Լէվիցնովը ԴէՊՊԵՐԻ ՄՍՍԻՆ մի տեղեկագիր է ուղարկել Վրաստանի էքզարխին, որից բաղում ենք հետեւեալը՝ բառացի կերպով. — «Երբ թափօրը, առաջնորդուած ոստիկանապետ պարուչիկ Իզրաչից

ներում ապրող զանազան—ազգերի ֆինները լիտացիները, լեհերը, փոքր սուսները, կովկասեան զանազան ժողովուրդները—մէջ ետում է մի զօրեղ մղում դէպի ինքնուրոյնութիւն. մի մղում, որ արտայայտել է՝ ուսական տէրութեան հետ ունեցած պետական կապերի վերացման, Ռուսաստանից զօրով անջատման և կատարեալ պետական ինքնուրոյնութեան ձգտումները, Սակայն դա հանդէս է գալիս միայն արսօլիտիստ Ռուսաստանի հանդէպ, եթէ սա վերածուց դէմօկրատիականի, կարող է այդ ազգերի ինքնուրոյնութեան ձգտող մղումը բաւարարութիւն ստանալ նաև այնպէս, որ նրանք կը մնան ուսական տէրութեան շրջանակի մէջ իսկ դա կը վերածուի և կընդունէ զաշնակցական պետութիւնները բնաւարութիւն—Ռուսաստանի միացեալ պետութիւնները» անունով : Դա կարող է մինչև անգամ առանձին ազգերի համար օգտակար լինել : Ինչ որ ամուր միացնում է անգլիական գաղութներն Անգլիայի հետ, համարում է այն իրողութիւնը, որ նրանց ինքնուրոյնութիւնը աւելի լաւ է ապահոված զօրեղ մտքի երկրի հետ ունեցած կապերով, քան թէ նրանցից իւրաքանչիւրը կզգիացած կանգնած լինէր համաշխարհային մեծ պետութիւնների հանդէպ :

Մի նմանօրինակ կշռադատում կարող է Ռուսաստանի սահմաններում ապրող ազգերից անգամ ամենազօրեղին զորեղ սերով մնալու պետական կապակցութեան մէջ, Հէնց իրենց լեհերը համար—նոյնը վերաբերում է և՛ հայերին—ազգային հարցը ոչ՝ միայն կայանում է ցարիզմից անկախութիւն, ձեռք բերելու մէջ, այլ և ազգի զանազան մասերի միացումը մի ուրոյն պետական մարմնի մէջ : Ինչ զործնական ձեւեր էլ որ ընդունէ այդ ձգտումը, միևնոյն է, յամենայն դէպս լեհերը, ինչպէս և հայերը, աւելի շատ բան կը վաստակեն, եթէ նրանք հենուեն զօրեղ Ռուսաստանին, քան ընդհակառակը :

Արդեօ՞ք լեհերի և Ռուսաստանի

միւս ծայրերի ժողովուրդների ազգային ձգտումները տէրութիւնից անջատելու ձեւ կընդունեն, թէ՛ ֆեդերատիւ ձեւ կը տան տէրութեան կազմին, դա կախած է մեծ մասամբ այն կերպերից, որ կընդունէ յեղափոխութիւնը ներքին Ռուսաստանում. եւ վերեւը մասնացոյց արի Անգլիայի և նրա գաղութների քաղաքական յարաբերութեան վրայ : Այդ յարաբերութիւնն անկարելի կը լինէր մի բիւրօկրատական կենտրոնական պետութեան մէջ, Դա հնարաւոր է միայն դէմօկրատիական կազմի մէջ, Որքան ուժգին գործէ պրօլետարիատը Ռուսաստանի յեղափոխութեան մէջ, որքան յեղափոխութիւնը ոչ միայն լիբերալ, այլև իսկապէս դէմօկրատիական լինի, այնքան աւելի մեծ ձգտական ուժ կը ստանայ տէրութիւնը իր ծայրերի ազգերի համար, այնքան սիրով կը գերադասեն վերջիններս Ռուսաստանի հետ ազատ միութեան մէջ մնալ, քան կուել նրա դէմ : Ընդհակառակը, որքան թույլ եղան Ռուսաստանի ներքին ուժերը փոփոխելու յաջողութիւնը, այնքան յեղափոխութիւնը ծայրերում սեպարատիստական տենդենցներ կընդունէ :

Իսկ որքան աւելի դէմօկրատական լինի Ռուսաստանը, այնքան աւելի շնչին կը լինի արեւմտեան Եւրոպայի դէմօկրատիայի հետաքրքրութիւնը, եթէ լեհական յեղափոխութիւնն առաջ ընթանայ Ռուսիայից անջատելու ուղղութեամբ : Դա անհրաժեշտ էր թուում միայն այն ժամանակ, երբ հաւանականութիւն չը կար ուսական արսօլիտիզմի արմատից ջախջախելու, երբ ազատ Ռուսաստանը մի բան էր թուում, որ ո՛ր եւ է մէկը հազիւ երազել համարձակէր : Այն ժամանակ ազատ Լեհաստան հնարաւոր էր միայն, որպէս ինքնուրոյն, Ռուսաստանից անջատւած պետութիւն. իսկ ինքնուրոյն Լեհաստան անհրաժեշտ էր, որպէսզի գրանով սահմանափակ էր Ռուսաստանը պաշտպանէր արեւմտեան Եւրոպան նրա նաճուճներից և ան-

հնարին դարձնէր Սրբազան Դաշինքը, նոյնը վերաբերում է կովկասին : Կովկասի ա ն ջ ա տ ու մ ը Ռուսաստանից, ինչպէս և Թիւրքիայի պահպանումը համարում էր արեւմտեան Եւրոպայի դէմօկրատիայի համար մինչև 19-րդ դարի 70-ական թւականը, որպէս մի կարեւոր միջոց ցարիզմը թուլացնելու և դրանով ամենուրեք զարկ տալու դէմօկրատիային :

Ռուսական յեղափոխութիւնը կը վերացնէ բոլոր դեմարտիստները, հէնց որ նրան յաջողեց արսօլիտիզմը փոխելու դեմօկրատիայով : Աժմ ոչ թէ տէրութեան ծայրերում, այլ ներքին մասերում է մղում դէմօկրատիայի համար ամենակարեւոր, վճռական կռիւլը : Ոչ միայն Ռուսաստանի բոլոր ազգերի սօցիալ դեմօկրատիայի, այլև ընդհանուր Եւրոպական սօցիալ դեմօկրատիայի շահերը պահանջում են, որ իսկական Ռուսաստանում յեղափոխութիւնը ըստ հնարաւորին ուժգին լինի, հետեւանքները ըստ կարելոյն դէմօկրատիական : Այդ դատաճառով Ռուսաստանի բոլոր պրօլետարիան կուսակցութիւնները ինչ ազգի էլ որ նրանք պատկանեն, պէտք է ներկայ խորհրդաւոր մօտենում թողնեն ամէն բան, ինչ որ յեղափոխութեան վնասում է իսկական Ռուսաստանում եւ անեն ամեն բան, ինչ որ նրան զօրեղացնէր կարող է : Պէտք է ներանց մէջ արմատանայ այն գիտակցութիւնը, թէ Ռուսաստանի կետրոնում պիտի կենտրոնան ճակատագիրը, նրանք չը պէտք է նետեն սեպարատիստական տենդենցներ ու պահանջներ, պէտք է սերտ շարկապ ման մէջ մնան իսկական Ռուսաստանի սօցիալ տկմօկրատիայի հետ և նրան սաստիկ զարկ տան : Իհարկէ ոչ պակաս զօրաւոր պէտք է նրանք առաջ դնան իրենց իսկական ազգերի մէջ, այնտեղ եւս պէտք է ներանք բոլոր ոյթերով պաշտպանեն ընդհանուր պրօլետարիական պահանջները, եւ ազգային մասնաւոր պահանջների ետանդուն պաշտպանութիւնը—եթէ նրանք չին ամփոփւած

ընդհանուր պահանջների մէջ—վերապահեն այն ժամանակամիջոցին, երբ իսկական Ռուսաստանում իրերի ընթացքը իրենց լուծման կը հասնեն : Այդ լուծման բնաւորութիւնից պիտի կախած լինի նաեւ իրենց ազգային պահանջների վախճանական գրութիւնը :

(Շարունակելի)

ՌՈՒՄ ԳԱՂԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՍՄԱՆՄԵՐՈՒԹՅԱՆ ԳՆՆՆԵՐԸ

Ռուս քաղաքական կուսակցութիւնները բաժնուած են հետեւեալ կերպով .

Մ տ յ ռ ա հ ն զ ձ ա խ ա կ ո ղ մ ե ա ն ն ե ռ , որ կազմուած է ընկերավարական յեղափոխականներէ ընկերով . ռամկավարականներէ և արմատականներէ, որոնց ընդհանուր նպատակն է Ռուսիան վերածել ռամկավարական դաշնակցական հասարակապետութեան մը, ազգային ժողովով մը որուն ընտրութեան մասնակցինբոլոր օրոսահպատակները առանց սեռի խտրութեան .

Չ ա խ ա կ ո ղ մ ե ա ն , որ քաղաքացած է սահմանադրական տէմօկրատներէ որոնք կը բաժնուին երկու ճիւղերու արմատականներու և շափաւորներու . առնց առաջինները, ինչպէս ծայրահեղ ձախակազմանները կուզեն որ ծուծան օրէնքներ հիմնելու իրաւունքներով օժտուած ըլլայ և ընտրուի նոյն ընտրողներով . բայց չուզեն որ բարձրագոյն իշխանութիւնը պահպանուի իր միապետական ձեւին մէջ : Չափաւորները դո՛ւ են հոկտեմբեր 17 ի մանիֆէստին վրայ հիմնուած ընտրողական իրաւունքներով :

Ա ջ ա կ ո ղ մ ե ա ն ն ե ռ որոց

Գ Ր Ե Յ
ՕԳՏԱՎ ՍԻՌՊՕ
— 3 —
ՀԱՅՐ ԲԱՆՖԻԼ(*)
— 0 —
(Թարգմանուած Ֆրանսերենէ)

Ռէնոյի Արքայաբանը ԹՊՐԳ զարուս գոյութիւն ունէր, զոր շինած էին Ս. Ժան տը Մաթա եւ Ս. Յէլիքա տը Վալուա, հիմնադիրները Դը ռինիզիակի կամ ալլապէս Փրկութեան հիւանալի եւ հզօր միարանութեան որ իր կրօնաւորները կը զրկէր փրկելու հեթանոսներուն գծրի բունած քրիստոնեաները : Առաջ սեղմուած նեղկեռակ շրջափակի մը մէջ, որ կը բազկանար բանջարանոցներէ, փոքր պտուղէ մը եւ մէկ քանի մարգագետիններէ, Արքայաբանը իր կալուածները քիչ քիչ ընդարձակեց . մէջ

Մ. Ս.—Հայր Բանֆիլ գրղէն միայն հատուածներ թարգմանուած են «Շարչուձի համար. սեր աշխատակից Մինիլէն եւ յուսով ենք թէ մեր ընթերցողները գոհ պիտի մնան :

առնելով արտ ու անտառ, լճակներ ու գիւղեր, ամրոզլ երկիրը, աչքդ առածին չափ շուրջանակի : ԹՊՐԳ զարուս, որ, նայելով դեռ կանգուն աւերակներուն՝ կարծես իր վրայ ա. մենէն աւելի թողած է իր խստերանց եւ մեծ վայելուչ ճարտարապետութեան գրոշմը, ունի եղբեր, կրսն, տասը հազար հէքթար անտառ, տասներկու հազար հէքթար մշակելի հող առանց հաշուելու Անտէնի, Վօփուոի եւ Գիւլուազոյի ընդարձակ լճակները, նշանաւոր իրենց առասպելական ծածաններով եւ իրենց մեծ ջազացնեբով, որ կ'աղային շուրջանակի աւելի քան տասը մղոն տեղ հեծուած ցորենը :

Ուստի, նախնական կուրիկ շինքերէն որոնք դարէ ի դար մեծցուած, փոփոխուած, հողակերտուած էին, արղէն այդ թուականին ուրիշ հետք չէր մնացած, եթէ ոչ պղտիկ աղբիւր մը, պարզուկ քանդակներով, որոնք հիմա կէս մը աւրուած են փամանակէն եւ մասամբ կրճուած մամուռներէն, եւ որուն եզերքը, ըստ ասանդութեան՝ Ժան տը Մաթայի երեցած է նուիրական եղբրուն, իր ոսկեղէն եղջերներուն մէջ տեղ կրելով կարմիր եւ կապոյտ խաչը՝

որոշիչ նշան միարանութեան :

Յեղափոխութիւնը վրայ հասնելով հալածեց Ռէնոյի արեղաները . իւրացուց անոնց ինչքերը՝ քանդեց Աբրայարանը, անարգ ոճիւրը գործեց մատուռը կործանելու՝ վերածնութեան էն հարազատ եւ էն ընտիր գը լուխ գործոցներին մէկը, ուրկէ մընացին միմիայն քանի մը սիւներ եւ մէկ երկու պատի կտորուանք, ցոյց տալով տխրօրէն հեռուէն հեռու, վայրը, ուր անիկա կանգնուեցաւ .

Կրօնաւորները սպասեցին որ Թրանսայի վրայէն փչէ անցնի յեղափոխական եւ կայսերական փոփոխիկը եւ 1817ին էր որ վերագարձան իրենց Ռէնոյի վանքը . որ փրածքներու տարօրինակ կոյտ մը դարձած եւ վերածուած էր նախնական համեստ շրջափակին : Սկսան մաքրել աւերակները եւ գէշ աղէկ վերաշինել նուազ վնասուած շէնքերը, այնչափէն ետքը ուրիշ ընկերք մը չը գը տան : Միբանութիւնը գոյծին հոգեկան մասին մէջ իր գոյութեան իրաւունքը կորուսած էր : Արդարեւ, այլ եւս ինչիւրը բարբարիկ ծովահէններու ձեռքէ քրիստոնեաները ազատելու վրայ չէր, ուրիշ բան գտնել հարկ էր . իրենց հողերէն զըրկ-

ուելով՝ անոնք չէին կրնար միտուրենուն անցնել երկրագործ դառնալու Դրաբեաններուն պէս, բոօֆէզօններու մասնաւոր մարմին մը չուենաւրով չէին կրնար զբաղիլ ուսմամբ ձիգուիթներուն նման : Իրենց ձեռնարկած երկու փորձերէն առաջինը՝ այն է պղտիկ մանչբու որբանոց մը, եւ երկրորդ արուեստանոց մը բնաւ չը յաջողեցան : Այն առնն, 1823ին, վնասուած՝ որոշեցին օտնել քալել, ոմանք գաղթեցին Սպանիոյ վանքերը, ուրիշներ Հռոմ ապաստանեցան, իրենց մեծաւորին քով : Եւ Արքայաբանը, լքուած, յանձնեցին, իր խնդրանքը, պահպանութեանը իրենց մէ մէկուն . վերապատուելի հայ Թանֆիլի, որ յամառօրէն կը հաւատար թէ միարանութիւնը պիտի վերագտնար իր նախնի աւանդութիւններուն . եւ որ առաջնակարգ կազմակերպիչ մը կը նկատուէր հարաւցի եւ շատ չանչան ըլլարուն :

(Շարունակելի)

նպատակն է արգելք հանդիսանալ հոկտեմբեր 17 ի մանիֆեստին մէջ խոստացուած անգլիական ոգիով խոստացուած ազատութեանց իրականացման և կուլտի կարելի եղածին շարք մեծ իշխանութիւն տալ թագաւորին և կառավարութեան, որպէսզի անոնք կախում չունենան Տումայի մեծամասնութենէն:

Մայրագոյն աջակողմեան ներք, որոնք կը յուսան գիւղացիներու աջակցութեամբ արգելք հանդիսանալ Տումայի հաւաքման և հոկտեմբեր 17 ի մանիֆեստին իրականացման, Ասոնք կուզեն միայն խորհրդակցող ժողով մը ունենալ, ինչպէս էին հին Մոսկովեան ժողովները:

Այս բաժանումները կը ցայտեն այն Ռուսիոյ մէջ բուն սահմանադրութիւն ստեղծելու համար սկսուած կռիւները դեռ վերջացած չեն, ու պահպանողական տարրը ներկայիս խոստացուած ազատութիւնները սահմանափակելու համար մեծ յոյսեր ունի գիւղացի դասակարգին վրայ: Եւ աս պարմանալին է. Ռուս գիւղացիները իրենց տգիտութեամբ և քաղաքացիական ազատութեան վրայ ոչ մի գաղափար չունենալնուն պատճառով, կրնան պահպանողականներուն ուժեղ զօրավիգ հանդիսանալ առաջիններուն խաւարային ոտնձգութիւններուն դէմ:

Այս կուսակցութիւնները ի հարկէ աւելի պիտ զտուին ապագայ Տումայի հաւաքումին ատեն, եթէ իսկապէս այդ հաւաքումը շուտով տեղի ունենայ:

Տեսնենք վերէն պիտի կարենա՞յ յարատեւել գոնէ մինչեւ Տումային հաւաքումը:

Ռուսիոյ մէջ, գուցէ և այլուր, վախցողներ կան որ Ռուսիոյ առաջին երեսփոխանական ժողովը Սուլթան Համիտին օրովը եղած թուրքիոյ առաջին երեսփոխանական ժողովէն վերջը ունենայ: Բայց միթէ հաւատարմաբ, որ ներկայիս Ռուս ժողովուրդը 30 տարի առաջուան թուրք ժողովրդին շարք քաղաքացիական զարգացման ստորին ստիճանին վրայ կը գտնուի: Այդ պիտի բան մը երեւակայելը քիչ մը զժուար է. սակայն ո՞վ գիտէ: Աշխարհիս մէջ ամեն տեսակ անակնկալ կըրնայ տեղի ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մեր եկեղեցականներուն մէջ աչքի զարնող այդ գործունեայ տիպը, զոր պուկարահայ գաղութը առաջնորդ ընտրեց և չը կրցաւ անոր աշխուրջ հովանութիւնը վայելել շնորհիւ անպի-

տան Վահան վարդապետի էնթրիգներու վախճաններ է: Վանի որսերը և անթի ժողովուրդը երբէք չեն մոռնար ներսէսը, որ անոնց օգտակար ըլլալու համար իր առաջնորդութեան առաջ պայմանը դրաւ Վանայ ժողովրդին նպաստի ապահովութիւնը սակալի կոտորածներէն վերջը:

— Վանայի հայ երիտասարդութիւնը իր հաւաքած գումարով ժամացոյցի անգլիական ոսկեայ շղթայ մը նուիրեց արուեստագէտ պ. Գալֆայանի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Նախարարաց խորհուրդը Երևանը մէջ նիստ մը գումարելով զեպական տուած նոթային պատասխան մը խմբագրեց: Կը հաւաստեն թէ, Դուռը կընդունի տէրութեանց բրոթքը և քօնթը օրը վերապահումով մը միայն, որովհետեւ շուգեր որ իւր հպատակներուն վրայ ունեցած ազդեցութիւնը պակասի:

— Սուլթանը նկարագրելով իր այժմու դժուարին կացութիւնը, հեռագրաւ խնդրած է Ձարէն և Աստորիոյ կայսրէն որ իրեն պայմանաւոր տան Մակեդոնիոյ Թիւնսական քօնթը օրը համար պատասխանը մերժողական եղած է. այդ երկու կայսրերը պատասխանած են թէ կառավարութեանց որոշումը անդառնալի է:

Նայէ Թրայէ Բրէսէ՞ իւր մի նախադրուածով կը յիշեցնէ Սուլթանին թէ Երոպիոյ հասարակաց կարծիքը շատ աւելի կշիռ ունի քան միւսիւմանինը և նաւային ցոյցը սկսուելուն պէս Սուլթանին մի բան կը մնայ միայն ընել. տեղի տալ:

— Սուլթանին դէմ եղած սպանութեան փորձին հեղինակներուն գատավարութիւնը սկսաւ շարժ Օր. Պէլճիքայի հիւպատոսարանը հրախրուած է փոխանորդ մը նշանակել գատավարութեան ներկայ լինելու համար:

Դուռը կ'առարկէ թէ եթէ տէրութիւնը շարունակեն ճնշում բանեցնել իր վրայ, ինք ալ պատասխանատուութենէ ազատ կը սեպէ յառաջ գալիք անկարգութեանց: Դեսպանք բնաւ կարելութիւն չեն տուած այդ սպառնալիցայ:

— Պոլսէն նոյեմբեր 13 ին կը հեռագրեն հետեւեալը. հեռագրով հրաման տրուած է միջազգային նաւատորմիդին շարժ Օրը մեկնել դէպի Միտիլին. եթէ թուրքիոյ կոյմէն գոհացում չը տրուի նաւատորմիդը շարժ Օրը պիտի գրաւէ Միտիլինի նաւահանգիստը և մաքսատունը:

— Բերայի փողոցներու պատերուն վրայ փակցուած են օր տարականներուն սպառնացող կոչեր. դեսպանատունէն հրը Սուլթանը պատասխան տուաւ կը բռնեն, եթէ օտարականներու վրայ յարձակում գործեն:

Դիւանագիտական շրջանակներու մէջ կը կարծեն որ պետութիւնները գոհացում պիտի ստանան, սակայն թուրք նախարարութիւնը պիտի փոխուի:

— Միջազգային նաւատորմիդը Բիրայէն մեկնած է շարժ Օրը կէսօրին: Անոնք կ'ընտան ծրարներու մէջ հրամաններ կը տան իրենց հետ:

Փրանսական պաշտօնական շրջանակներու մէջ կը կարծեն որ Սուլթանը ճնշել տալու համար ամենալաւ միջոցը թրքական քանի մը կղզիներ գրաւելն է:

— Բարիզէն 14 նոյեմբերին, անգլիական ազբուրէ: Կը հաղորդեն որ Գերմանիան զրահաւոր մը պիտի զրկէ Մուլթիոյ դէմ ծովային ցոյցին մասնակցելու համար:

— Գիւրտերէ բաղկացած համիտիներու գնդին հրամանատար Կարահիմ փաշան յանկարծակի մահը խորհրդաւոր կը համարուի: Անգլիական կառավարութիւնը այդ հայերը շարժողին զազանութեանց դէմ քանի մը անգամ բողոքած էր:

Թ Ո Ւ Ս Ի Ա

Թիֆլիզի թիւրք հիւպատոսը տեղեկանեցած է իւր կառավարութեան թէ Ռուսիա կովկասի սպառնալուծութիւնը զսպելու պատուակին տակ բազմաթիւ զօրք կը համախմբէ: Ռուսիոյ նպատակն է եղբոր կայսրացոյն Արեւելքի մէջ կորսնցուցած ազդեցութիւնը շահիլ թուրքիոյ մէջ:

Դուռը այս լուրին վրայ հրաման ըրած է իւր Բեթերսպուրկի դեսպանին բացատրութիւն պահանջելու Ռուս կառավարութենէն:

— Բեթերսպուրկէն նոյեմբեր 12ին կը հեռագրեն հետեւեալը. — Սոսիալ դէմոկրատիական թերթի առաջին համարը լոյս տեսաւ: Թերթը կը կոչուի «Սկիզբ» թերթը իր ծրագիրը պարզելով կը յայտարարէ. «մեր նպատակն է յնդափոխութեան շարքերը զօրեղացնել և պուրժուական սահմանադրութենէն ըստեղծել ընդարձակ հող սօցիալական և յեղափոխական գործունէութեան համար: Այդ յօդուածը կը վերջանայ հետեւեալ կերպով. «կեցցէ սօցիալական յեղափոխութիւնը»:

— Բեթերսպուրկէն նոյեմբեր 12ին կը հեռագրեն թէ խումբ

մը նաւազներ և գործաւորներ կարմիր գրօշակներով խուժեր են Սեւասթօքոլ:

Կ Ր Է Տ Է

Ապստամբները իրենց ձեռքը գտնուած զէնքերուն մեծ մասը մտադիր չեն յանձնելու, որովհետեւ կղզիին վարչութիւնը վստահացուցած է ապստամբներուն թէ յառաջիկայ գարնան այդ զէնքերուն պէտք պիտի ունենան: Ապստամբոս Քօնստանդէն մտադիր է խումբով մը Մակեդոնիա անցնել:

Մ Օ Ն Թ Է Ն Է Կ Ր Օ

Ռօնթէնէկօի կառավարութիւնը կը հրաւիրէ ժողովուրդը դեկտեմբեր 14ին ընտրութիւն կատարելու նոր բացուելիք երեսփոխանական ժողովին: Քաղաքացիական իրաւունքներ ունեցող ամեն 21 տարեկան անձինք կրնան ընտրող լինել, իսկ ընտրելի՝ 31 տարեկան եղողներն որոնք 15 քուրօն ալ տուրք մը կը վճարեն:

Ք Օ Ր Է Ա

Ճարօն—Քօրէայի դաշնագրութիւնը կ'ընտան լինելով Ճարօնացի զօրապետ Հաչէկափա ընդհանուր կառավարիչ անուանուցաւ: Պիտի բնակի Քօրէայի մայրաքաղաքը: Օտար հիւպատոսութիւնները շնչուած լինելով, սակից վերջ Քօրէայի դիւանագիտական գործառնութիւնները Ճարօնի արտաքին գործոց նախարարութեան միջոցաւ տեղի պիտի ունենան: Տէրութիւնք միմիայն հիւպատոսներ պիտի ունենան Չէմուրօի մէջ:

Քօրէայի նախարարապետը դաշնագրութիւնը ստորագրուելու ժամանակ թէպէտեւ փոխած է պալատէն, բայց Ճարօնացի ոստիկաններ բռնելով զայն կըրկին պալատ բերած են, բայց չը ստորագրելուն պատճառաւ կայսրը 3 տարուան աքսորի գատապարտած է զայն: Այսպիսով Քօրէա ալ ևս ճարօնի գերիշխանութեան տակ մտած կըլլայ:

ԲԱՐԹՈՂ ԲԱՇԱ

Եգիպտոսնակ Բարթող բաշա այս անգամ 10000 ֆրանք զրկած է էջմիածին Ամենայն Հայոց Ս. Հայրապետին, կովկասի խոզութեանց առթիւ հաստատուած նպատակը Սնտուկին յանձնուելու համար: